

Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն Պ Լ Ա Ն

ԱՄՈՒՐՅԱՆԻ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ 2017-2022
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

I. ԱՄՈՒՐՅԱՆԻ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Ախտորյանի ջրավազանային կառավարման պլանի նախագծի հիմնական նպատակը Ախտորյանի ջրավազանային տարածքում ջրօգտագործողների՝ ներառյալ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի փոխկապակցված հարաբերությունները հավասարակշռելն է: Այն նպատակ ունի նաև աջակցելու ջրային ռեսուրսների կառավարման համար պատասխանատու մարմիններին՝ ներառյալ Ախտորյանի ջրավազանային տարածքային կառավարման բաժնին, վարչական մարմիններին, քաղաքականությամբ զբաղվողներին և հանրությանը՝ ջրային ռեսուրսների ոլորտում որոշումներ ընդունելիս:

2. Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածքը (Ախտորյանի ՋԿՏ) գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմուտքում, սահմանակից է Վրաստանին և Թուրքիային: Տարածքը ներառում է Ախտորյանի և Մեծամորի գետավազանները և զբաղեցնում է 5029 կմ² մակերես: Ախտորյանի ՋԿՏ-ն վարչական տեսանկյունից ներառում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզն ամբողջությամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի և Արմավիրի տարածաշրջաններն ամբողջությամբ և Էջմիածնի տարածաշրջանի 11 համայնքների վարչական տարածքները, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանն ամբողջությամբ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանի Ռանչպարի համայնքի վարչական տարածքը:

II. ԱԽՈՒՐՅԱՆԻ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

3. Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսներն ընդամենը կազմում են 3752,7 մլն մ³, այդ թվում՝ բազմամյա բնական գետային հոսքը՝ 2593,4 մլն մ³, ստորերկրյա ջրային պաշարները՝ 1130,1 մլն մ³, բնական լճերը՝ 0,023 մլն մ³, ջրամբարների մեռյալ ծավալը՝ 28,09 մլն մ³, ձնաբծերը՝ 1,07 մլն մ³ .

1) բազմամյա բնական գետային հոսքը ներառում է նաև Մեծամորի գետավազանում Արաքս և Ախուրյան գետերի միախառնումից ներքև ընկած հատվածից վերցվող Հայաստանի հասանելի ջրի քանակը՝ 1114,9 մլն մ³, ինչպես նաև Ախուրյանի գետավազանի գետերի էկոլոգիական թողքը՝ 194,5 մլն մ³ և Մեծամորի գետավազանի գետերի էկոլոգիական թողքը՝ 106,0 մլն մ³.

2) Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի ստորերկրյա ջրերի պաշարները կազմում են 1130,1 մլն մ³, այդ թվում՝ A+B կարգի ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները՝ 895,4 մլն մ³, C₁ կարգով հաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները՝ 35,1 մլն մ³ և C₂ կարգով հաստատված ստորերկրյա պաշարները կամ խորքային հոսքը՝ 199,6 մլն մ³:

4. Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները որոշվում են «Ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն:

5. Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները սահմանված են սույն հավելվածի N 1 աղյուսակում:

			Աղյուսակ N 1
Ջրային ռեսուրսները, մլն մ ³	Գետավազան		Ախուրյանի ՋԿՏ
	Ախուրյան	Մեծամոր	

Օգտագործելի ջրային ռեսուրսներ			
Գետային հոսքը	506,2	1786,7	2292,9
A+B կարգով հաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները	102,9	792,5	895,4
Ընդամենը	609.1	2579.2	3188,3
Ռ-ազմավարական ջրային պաշար			
Բնական լճերի ծավալի 1/3 մասը	0,005	0,003	0,008
Ջրամբարների մեռյալ ծավալի 2/3 մասը	1,34	5,383	6,726
C ₁ կարգով հաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները	35,1	-	35,1
Ընդամենը	36.45	5.39	41,83
Ազգային ջրային պաշար			
Գետերի էկոլոգիական թողքը	194,5	106,0	300,5
Բնական լճերի ծավալի 2/3 մասը	0,009	0,006	0,015
Ջրամբարների մեռյալ ծավալի 1/3 մասը	0,67	2,692	3,363
Արփի լիճ ջրամբարի մեռյալ ծավալը	18,0	-	18,0
Ձնաբծեր և ֆիռնների դաշտերը	1,05	0,02	1,07
C ₂ կարգով հաստատված պաշարները կամ խորքային հոսքը	56,1	143,52	199,62
Ընդամենը	270.33	252.24	522,57

1) սույն հավելվածի N 1 աղյուսակի Մեծամորի գետավազանի օգտագործելի գետային հոսքի 1786,7 մլն մ³ ջրաքանակը ներառում է նաև Արաքս և Ախուրյան գետերի միախառնումից ներքև ընկած հատվածից վերցվող Հայաստանի Հանրապետությանը հասանելի ջրի քանակը՝ 1114,9 մլն մ³.

2) պաշարների պետական հանձնաժողովի կողմից 1984 թվականին Արարատյան արտեզյան ավազանի համար հաստատվել են ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները՝ համաձայն որի Մեծամորի գետավազանում A+B կարգով հաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները կազմում են 1585,0 մլն մ³: Սակայն, վերջին տարիներին Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի հյուծմամբ պայմանավորված, ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները կրճատվել են շուրջ 2 անգամ համաձայն փորձագիտական գնահատականի: Ուստի սույն հավելվածի N 1 աղյուսակում որպես Մեծամորի գետավազանում օգտագործելի ստորերկրյա ջրային ռեսուրսներ առաջարկվում է համարել տարեկան 792,5 մլն մ³ ծավալը՝ մինչև Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների վերագնահատումը և հաստատումը:

3) սույն հավելվածի N 1 աղյուսակի ազգային ջրային պաշարում ներառված Արփի լճի մեռյալ ծավալի 18,0 մլն մ³ սահմանելու հարցը կքննարկվի Կապսի ջրամբարի կառուցման աշխատանքների իրականացումից հետո:

III. ՋՐԱՎԱԶԱՆՈՒՄ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԹՈՂՔԻ ՈՐՈՇՈՒՄԸ

6. Հայաստանի Հանրապետությունում գետերի էկոլոգիական թողքը որոշվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 927-Ն որոշմամբ հաստատված մեթոդիկայի:

7. Հիդրոլոգիական դիտակետերում Ախուրյանի ՋԿՏ-ի գետերի էկոլոգիական թողքի տարեկան արժեքները նշված են N 2 աղյուսակում (Մեծամոր գետի Ռանչպար դիտակետի էկոլոգիական թողքը հաշվարկվել է մինչև 2004 թվականի դիտարկումների հիման վրա):

Աղյուսակ N 2		
NN ը/կ	Գետ-դիտակետ	Էկոլոգիական թողք մ ³ /վ
1.	Ախուրյան-Պաղակն	0,49
2.	Աշոցք-Կրասար	1,56
3.	Ախուրյան-Ամասիա	2,46
4.	Ախուրյան-Կապս	2,60
5.	Ախուրյան-Ախուրիկ	3,15
6.	Կարկաչուն-Ղարիբջանյան	0,27
7.	Մեծամոր-Ռանչպար	14,4
8.	Կարմրաջուր-Շաղիկ	0,062
9.	Եղնաջուր-Գառնատիճ	0,072
10.	Ձորագետ-Ձորակերտ	0,022
11.	Թավշուտ-Թավշուտ	0,023
12.	Իլիգետ-Ջրաձոր	0,098
13.	Ջաջուռ-Ջաջուռ	0,12
14.	Մանթաշ-Մեծ Մանթաշ	0,10
15.	Արաքս-Սուրմալու	15,3
16.	Ախուրյան-Հայկաձոր	9,20

8. Ախտորյանի ՋԿՏ-ի այն գետերի էկոլոգիական թողքի արժեքները, որոնց վրա չկան և չեն եղել հիդրոլոգիական դիտակետեր նշված են N 3 աղյուսակում:

		Աղյուսակ N 3
NN ը/կ	Գետ/ջրային մարմին	Էկոլոգիական թողք, մ ³ /վ
1.	Կարախան	0,023
2.	Ախտորյան գետի հատվածն Արփի լճից մինչև Բերդաշենի համայնք	0,49
3.	Ախտորյան գետի հատվածը Գիծգետից մինչև Կասկադ փոքր ՀԷԿ	2,38
4.	Ղազանչի	0,39
5.	Վարդադրյուր	0,23
6.	Ցողամարգ	0,011
7.	Հորթաջուր	0,017
8.	Ախտորյան գետի հատվածը Հորթաջուր և Իլիգետ գետերի միջև	2,55
9.	Ախտորյան գետի հատվածը Իլիգետ գետի և Կապսի ջրամբարի միջև	2,85
10.	Գթաշեն	0,040
11.	Կումայրի	0,070
12.	Հայկավան	0,026
13.	Ջրառատ	0,049
14.	Ջաջուռ գետի հատվածը Ջրառատ և Կամրաքար գետերի միջև	0,15
15.	Արթիկջուր	0,054
16.	Մեծջուր գետն ակունքից մինչև Սառնակունքի ջրամբար	0,025
17.	Մեծամոր գետն ակունքից մինչև Քասախի միախառնում	3,36
18.	Ախտորյան գետի հատվածը Կապսի ջրամբարից մինչև Մարմաշեն բնակավայր	2,60
19.	Կումայրի գետը Գյումրի քաղաքի տարածքում	0,075
20.	Կարմրաքար	0,015
21.	Արթիկջուր գետը Արթիկ բնակավայրից մինչև Վարդաքարի ջրամբար	0,060
22.	Ախտորյան գետի հատվածը Մարմաշեն բնակավայրի և Կումայրի գետի միախառնման կետի միջև	3,00
23.	Կումայրի գետի Գյումրիգետ վտակ	0,030
24.	Ջաջուռ գետի հատվածը Կամրաքար գետից մինչև գետաբերան	0,18
25.	Մանթաշ գետի հատվածը Վարդաքարի ջրամբարից մինչև գետաբերան	0,20

IV. ԱՆՈՒՐՅԱՆԻ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՍՑԵՆԱՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

9. Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածքում ջրային ռեսուրսների բարելավումն ըստ ոլորտների տալու նպատակով կանխատեսվում է գետավազաններում ջրառաջարկն ու տնտեսական զարգացմամբ պայմանավորված ջրապահանջարկը՝ կառավարման պլանավորման առաջին վեցամյա ժամանակահատվածի համար: Կանխատեսվող ջրառաջարկը գնահատվում է՝ հաշվի առնելով գետավազաններում տնտեսական զարգացման միտումները և կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա, ինչպես նաև գնահատվում է՝ հաշվի առնելով Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածքի գետավազանների ազգային, ռազմավարական և օգտագործելի ջրային ռեսուրսների մեծությունները, որոնք սահմանված են սույն հավելվածի N 1 աղյուսակում: Տնտեսական զարգացման վրա հիմնված ջրապահանջարկի կանխատեսումներ անելիս կիրառվում են տարբեր մոտեցումներ ջրօգտագործման տարբեր ոլորտների համար՝ պայմանավորված ոլորտների տնտեսական զարգացման առանձնահատկություններով:

10. Ջրօգտագործման կանխատեսումը կատարվում է բազիսային (ելակետային) սցենարով, որով ոլորտների աճի տեմպերի կանխատեսումները հիմնականում հիմնված են ոլորտային զարգացման ծրագրերով սահմանված նպատակային ցուցանիշների վրա:

11. Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածքում ջրառաջարկի կանխատեսվող փոփոխությունը 2017-2022 թվականների համար սահմանվում է սույն հավելվածի N 4 աղյուսակում:

Աղյուսակ N 4

Գետավազան	Ջրառաջարկի տիպը	Ջրառաջարկը, մլն մ ³					
		2017 թ.	2018 թ.	2019 թ.	2020 թ.	2021 թ.	2022 թ.
Ախտորյան	մակերևութային	504,8	503,3	501,9	500,4	499,0	497,6
	ստորերկրյա	102,6	102,3	102,0	101,7	101,4	101,1
	ընդամենը	607,4	605,6	603,9	602,1	600,4	598,7

Մեծամոր	մակերևութային	1776,0	1765,3	1754,7	1744,2	1733,7	1723,3
	ստորերկրյա	787,7	783,0	778,3	773,7	769,0	764,4
	ընդամենը	2564,5	2549,72	2535,0	2520,2	2505,5	2490,8
Ախուրյանի ՋԿՏ	մակերևութային	2280,7	2268,6	2256,6	2244,6	2232,7	2220,9
	ստորերկրյա	890,4	885,3	880,3	875,4	870,4	865,5
Ընդամենը՝ Ախուրյանի ՋԿՏ-ում		3188,3	3171,8	3155,3	3138,9	3122,4	3105,9

12. Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում կանխատեսված ջրառաջարկի և ջրապահանջարկի համադրությամբ գնահատվում է ջրավազանում ջրային ռեսուրսների դեֆիցիտը կամ պրոֆիցիտը՝ 2017 թվականից մինչև 2022 թվականը: Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի ջրառաջարկի և ջրապահանջարկի վերլուծությունը տրվում է ելակետային սցենարով՝ ըստ ջրօգտագործման ոլորտների: Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում ջրառաջարկի և ջրապահանջարկի միտումները մինչև 2022 թվականը, ըստ ջրօգտագործման ոլորտների, սահմանվում են N 5 աղյուսակում:

Աղյուսակ N 5

Գետավազան	Ջրօգտագործումն ըստ ոլորտների մլն մ ³	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Ախուրյան	<i>Խմելու-կենցաղային</i>	64,0	65,3	66,6	67,9	69,2	70,5
	<i>Ոռոգում</i>	212,1	219,0	227,3	235,6	243,9	252,1
	<i>Արդյունաբերություն</i>	0,30	0,31	0,32	0,33	0,34	0,35
	<i>Ձկնաբուծություն</i>	15,3	15,3	15,3	15,3	15,3	15,3
	<i>Հիդրոէներգետիկա</i>	218,0	215,4	212,7	210,1	207,4	204,8
	Ընդամենը՝ ջրապահանջարկը	509,7	515,3	521,0	526,6	532,3	537,9
	Ջրառաջարկը	607,4	605,6	603,9	602,1	600,4	598,7
	Դեֆիցիտը/պրոֆիցիտը	97,7	90,3	82,9	75,5	68,1	60,8
Մեծամոր	<i>Խմելու-կենցաղային</i>	90,1	91,4	92,7	94,0	95,3	96,6
	<i>Ոռոգում</i>	1152,2	1163,7	1176,8	1190,0	1203,1	1216,9
	<i>Արդյունաբերություն</i>	41,9	43,4	44,9	46,4	47,9	49,4
	<i>Ձկնաբուծություն</i>	142,0	142,0	142,0	142,0	142,0	142,0
	<i>Հիդրոէներգետիկա</i>	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
	Ընդամենը՝ ջրապահանջարկը	1426,2	1440,5	1455,1	1469,8	1484,4	1499,7
	Ջրառաջարկը	2564,5	2549,7	2535,0	2520,2	2505,5	2490,8
	Դեֆիցիտը/	1138,3	1109,2	1079,9	1050,4	1021,1	991,1

	պրոֆիցիտը						
Ախտորյանի ՋԿԸ	<i>Խմելու-կենցաղային</i>	152,5	150,8	149,3	147,7	146,2	144,6
	<i>Ոռոգում</i>	1365,9	1388,6	1411,5	1434,6	1457,5	1481,1
	<i>Արդյունաբերություն</i>	42,2	43,7	45,2	46,7	48,2	49,8
	<i>Ձկնաբուծություն</i>	157,3	157,3	157,3	157,3	157,3	157,3
	<i>Հիդրոէներգետիկա</i>	218,0	215,4	212,7	210,1	207,4	204,8
	Ընդամենը ջրապահանջարկը	1935,9	1955,8	1976,1	1996,4	2016,7	2037,5
	Զրատաջարկը	3171,9	3155,3	3138,9	3122,3	3105,9	3089,5
	Դեֆիցիտը/պրոֆիցիտը	1236,0	1199,5	1162,8	1125,9	1089,2	1052,0

13. Մեծամորի գետավազանի արդյունաբերական նպատակով ջրառի ծավալում ներառված է նաև «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությանը հատկացվող՝ 37,0 մլն մ³ ջրաքանակը, մոտավորապես 97%-ը :

14. Մեծամորի գետավազանում, որպես Արարատյան դաշտի մաս, արգելել հորատել նոր հորատանցքեր:

15. Մեծամորի գետավազանում, որպես Արարատյան դաշտի մաս, արգելել ստորերկրյա քաղցրահամ ջրերից ձկնաբուծության նպատակով ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը:

16. Ախտորյանի գետավազանի հիդրոէներգետիկ նպատակով ջրապահանջարկը հաշվարկելիս ներառվել է միայն գետավազանի ստորին հատվածում գտնվող «Մարմարաշեն» հիդրոէլեկտրակայանի ջրապահանջարկը, քանի որ գետավազանի վերին հատվածներում հիդրոէներգետիկ նպատակներով օգտագործվող ջուրը վերադարձնելուց հետո օգտագործվում է նաև այլ ոլորտներում և համապատասխանաբար հաշվի է առնված ըստ այդ ոլորտների ջրապահանջարկում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թվականի
մարտի 9-ի N - Ն որոշման

ԱՒՈՒՐՅԱՆԻ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ ՌԻԳՂՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Աղետների կառավարման պլանի մշակում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	2018 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
2.	Ախտորյանի ԶԿՏ-ում մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի համակարգի մշակում	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	2019 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
3.	Ախտորյանի ԶԿՏ-ում տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների պայմանների վերանայում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2019 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թվականի
մարտի 9-ի N 240 - Ն որոշման

ԱԽՈՒՐՅԱՆԻ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋՆԱՇԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Աղետների կառավարման պլանի մշակում	ՀՀ արտակարգ իրավիճակ- ների նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	2018 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում
2.	Ախտորյանի ԶԿՏ-ում մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիտորինգի համակարգի մշակում	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	2019 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում
3.	Ախտորյանի ԶԿՏ-ում տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների պայմանների վերանայում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2019 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ